

Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի միջև երկարաժամկետ տնտեսական համագործակցության 2001-2010 թվականների միջապետական ծրագրի միջոցառումներ

N <sup>o</sup>	Միջոցառումների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողները	
1	2	3	4	5
1	Տնտեսական համագործակցության հիմնական ուղղությունները		Ուկրաինայի կողմից	Հայաստանի Հանրապետության կողմից
1.1	Հետևյալ առաջարկների նախապատրաստում			
1.1.1	Քննարկել «Հայաստան-Ուկրաինա» առևտրի տուն ստեղծելու հնարավորությունը	2001	Առևտրաարդյունաբերական պալատ	Առևտրաարդյունաբերական պալատ
1.1.2	Համատեղ տնտեսավարող կառույցների ստեղծման բնագավառում պետությունների օրենսդրական և այլ նորմատիվ ակտերի ներդաշնակեցում	2001	Էկոնոմիկայի նախարարություն, Ձեռներեցության պետական կոմիտե	Արդյունաբերության և առևտրի նախարարություն
1.1.3	Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարության և Ուկրաինայի արդյունաբերական քաղաքականության նախարարության միջև արտադրական կոոպերացիայի մասին համաձայնագրերի կատարում	2001-2010 (տարեկան)	Արդյունաբերական քաղաքականության նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն	Արդյունաբերության և առևտրի նախարարություն
1.1.4	1997 թվականի հուլիսին ստորագրված գիտատեխնիկական	2001-2010	Գիտության նախարարություն	Գիտության և կրթության նախարարություն

	համագործակցության մասին երկկողմ համաձայնագրի դրույթների կատարում			
1.1.5	1997 թվականի հուլիսին ստորագրված ավտոմոբիլային հաղորդակցության մասին երկկողմ համաձայնագրի դրույթների կատարում	2001-2010	«Ուկրավտոդոր», Տրանսպորտի նախարարություն	Տրանսպորտի նախարարություն
1.1.6	Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի միջև երկկողմ տարածաշրջանային համագործակցության հարցի քննարկում	2001-2010	Մարզային պետական ադմինիստրացիաներ, տեղական ինքնակառավարման մարմիններ	Տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարար
1.1.7	Երևան և Կիև քաղաքների միջև, ինչպես նաև Շիրակի, Տավուշի, Լոռու մարզերի և Ուկրաինայի մարզերի միջև ուղղակի կապեր ստեղծելու հնարավորության քննարկում	2001	Կիևի քաղաքային և մարզային ադմինիստրացիաներ	Տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարար
1.1.8	Քարտեզներ տպագրելու համար տեխնոլոգիական սարքավորումների արտադրություն և մատակարարում	2001-2010	«Ուկրգեոդեզ կարտոգրաֆիա»	ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության և գրահրատարակչության վարչություն
1.1.9	Հայաստանի Հանրապետությունում ուկրաինական ապրանքարտադրողների արտադրանքի ցուցահանդես-վաճառքի և շնորհանդեսի կազմակերպում	2001-2010	Առևտրաարդյունաբերական պալատ, Էկոնոմնախարարության ազգային ցուցահանդեսային կենտրոն	Առևտրաարդյունաբերական պալատ, Արդյունաբերության և առևտրի նախարարություն

I.1.10	Կազմակերպական աշխատանքների իրականացում՝ Ուկրաինայի գյուղատնտեսական, սննդի, բժշկական և միկրոկենսաբանական ճյուղերի ձեռնարկությունների ներկայացուցչություններ հիմնելու ուղղությամբ	2001-2010	Գյուղատնտեսական արտադրանքի նախարարություն, Սննդարդյունաբերության պետական կոմիտե, Բժշկական արդյունաբերության պետական կոմիտե	Գյուղատնտեսության նախարարության, առողջապահության նախարարություն
I.2	Միջկառավարական և միջգերատեսչական համաձայնագրերի նախագծերի նախապատրաստում			
I.2.1	Քննարկել հայ-ուկրաինական համատեղ ձեռնարկություն ստեղծելու մասին համաձայնագիր կնքելու և դրա հիման վրա կոնսիզնացիոն (լիզինգային) պահեստ բացելու հնարավորությունը՝ ուկրաինական արտադրության պատրաստի դեղագործական արտադրանքը Հայաստան ներմուծելու նպատակով	2001	Բժշկակենսաբանական արդյունաբերության պետական կոմիտե	Առողջապահության նախարարություն
I.2.2	Ստորագրել համաձայնագիր Հայաստանի Հանրապետության համապատասխան ռադիոկազմակերպության և Ուկրաինայի ազգային ռադիոընկերության միջև	2001-2003	Տեղեկատվության նախարարություն	ՀՀ կառավարությանն առընթեր գրահրատարակչության և տեղեկատվության վարչություն

	ռադիոհաղորդումների ոլորտում համագործակցության մասին			
1.2.3	Ավարտել Հայաստանի Հանրապետության «Արմենպրես» պետական տեղեկատվական գործակալության և Ուկրաինայի պետական տեղեկատվական գործակալության (ՈՒՊՏԳ) միջև տեղեկատվական համագործակցության մասին համաձայնագրի նախագծի մշակումը	2001	Պետական տեղեկատվական գործակալություն	ՀՀ կառավարությանն առընթեր գրահրատարակչության և տեղեկատվության վարչություն
1.2.4	Ստորագրել համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի ֆինանսների նախարարությունների միջև համագործակցության մասին	2001-2002	Ֆինանսների նախարարություն	Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն
1.2.5	Նախապատրաստել միջկառավարական համաձայնագրի նախագիծ մեքենաշինության բնագավառում	2001	Արդյունաբերական քաղաքականության նախարարություն	Արդյունաբերության և առևտրի նախարարություն
1.2.6	Նախապատրաստել միջկառավարական համաձայնագրի նախագիծ էլեկտրոնային արդյունաբերության բնագավառում համագործակցության մասին	2001	Արդյունաբերական քաղաքականության նախարարության	Արդյունաբերության և առևտրի նախարարություն
1.2.7	Ստորագրել համաձայնագիր փոխադարձ կոոպերացված	2001	Արդյունաբերական քաղաքականության	Արդյունաբերության և առևտրի նախարարություն

	մատակարարումների մասին արտադրանքի մատակարարումների ծավալների հավելվածներով և համաձայնագրի կատարմանը ներգրավված ձեռնարկությունների ցանկով		նախարարություն	
1.2.8	Մշակել և համաձայնեցնել դեղագործական արդյունաբերության բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի նախագիծ	2001	Բժշկակենսաբանական արդյունաբերության պետական կոմիտե, Արտաքին գործերի նախարարություն	Առողջապահության նախարարություն
1.2.9	Ապրանքներ (աշխատանքներ, ծառայություններ) արտահանելիս և ներմուծելիս անուղղակի հարկերի գանձման սկզբունքների մասին համաձայնագրի վավերացում Ուկրաինայի Գերագույն ռադայի կողմից և համաձայնագիրը գործողության մեջ դնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգի կատարման մասին կողմերի հայտագրերի փոխանակում	2001	Արտաքին գործերի նախարարություն, Պետական հարկային վարչություն	Արտաքին գործերի նախարարություն
1.2.10	Մշակել և ստորագրել սեյսմոլոգիայի և սեյսմիկ ռիսկի նվազեցման բնագավառում համագործակցության մասին համաձայնագիր	2001-2006	Պետշին	ՀՀ կառավարությանն առընթեր սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն
1.2.11	Մշակել և համաձայնեցնել	2001-2003		Արդարադատության

	քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության մասին, արդարադատության նախարարությունների միջև համագործակցության մասին, իրավական տեղեկության փոխանակման բնագավառում համագործակցության մասին համաձայնագրերի նախագծեր			նախարարություն, Արտաքին գործերի նախարարություն
I	Համագործակցություն տնտեսության առանձին ճյուղերում			
2.1	Ապրանքային շուկաների զարգացման բնագավառում			
2.1.2	Առաջարկների պատրաստում համատեղ շուկաներում գործող արտադրություններ ստեղծելու նպատակով	2001	Բժշկակենսաբանական արդյունաբերության պետական կոմիտե, Էկոնոմիկայի նախարարություն	Արդյունաբերության և առևտրի նախարարություն
2.1.3	Այն առաջնային ճյուղերի և արտադրությունների ցանկի սահմանում, որոնք հնարավոր է ներգրավել հայ-ուկրաինական համատեղ ձեռնարկությունների ստեղծման գործում՝ լեռնարդյունահանող արդյունաբերություն, տուրիզմ-ռեկրեացիոն համալիր	2001	Ագրոարդյունաբերության նախարարություն, Էներգետիկայի նախարարություն, զբոսաշրջության նախարարություն	Արդյունաբերության և առևտրի նախարարություն, Գյուղատնտեսության նախարարություն
2.2	Մեքենաշինություն			

2.2.1	Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի ձեռնարկություններում քարի արդյունահանման և վերամշակման ժամանակակից սարքավորում-ների /ներառյալ բազմասկավառակային սղոցող հաստոցների՝ 30-60 սկավառակ/ համալիրի ստեղծում և տեղադրում	2001-2003	Արդյունաբերական քաղաքականության նախարարություն, ՎԱՏ «Դնեպրոստրոյմաշինա», ք. Կիև, ՎԱՏ «Բեվերս», ք. Բերդիչև	Արդյունաբերության և առևտրի նախարարություն, Շինարարական կոնստրուկցիաների գիտահետազոտական ինստիտուտ, ք. Երևան, «Շինմեքենա» գործարան, ք. Գյումրի
2.2.2	Հայաստանի Հանրապետության ձեռնարկություններում քարի արդյունահանման և վերամշակման առկա սարքավորումների արդիականացում՝ էներգան և նյութատարությունը նվազեցնելու և էներգիան տնտեսող սարքավորումներ կիրառելու նպատակով	2001-2003	Արդյունաբերական քաղաքականության նախարարություն, ՎԱՏ «Դնեպրոմեքենաշինություն», ք. Կիև	Արդյունաբերության և առևտրի նախարարություն, Շինարարական կոնստրուկցիաների գիտահետազոտական ինստիտուտ, ք. Երևան
2.2.3	Էլեկտրալամպերի արտադրության համատեղ ձեռնարկության ստեղծում՝ օգտագործելով Ուկրաինայի հունքային բազան	2001-2003	Արդյունաբերության քաղաքականության նախարարություն, «Դնեպրոմեքենաշինություն» ՎԱՏ, ք. Կիև	Արդյունաբերության և առևտրի նախարարություն, Երևանի շինարարական կոնստրուկցիայի ԳՀԻ
2.3	Վառելիքաէներգետիկ համալիր			
2.3.1	Գազամատակարարման համակարգի վերակառուցման և արդիականացման աշխատանքներին ուկրաինական կազմակերպությունների մասնակցության մասին համատեղ առաջարկների պատրաստում՝ այդ	2001-2010	Վառելիքի և էներգետիկայի նախարարություն	Էներգետիկայի նախարարություն

	աշխատանքների ֆինանսավորման հարցը լուծելու պայմանով			
2.3.2	Հայկական հէկերի էներգետիկ սարքավորումների կապիտալ վերանորոգման և սպասարկման աշխատանքներին ուկրաինական կազմակերպությունների մասնակցության մասին համատեղ առաջարկների պատրաստում	2001-2010	Վառելիքի և էներգետիկայի նախարարություն	Էներգետիկայի նախարարություն
2.3.2 u	Գործող աէկների անվտանգությունը բարձրացնելու գործում երկկողմ համագործակցության ծրագրի մշակում	2001	Վառելիքի և էներգետիկայի նախարարություն, «Էներգատոմ» գիտափորձարարական ինստիտուտ	Էներգետիկայի նախարարություն
2.4	Կրանսպորտ			
2.4.1	Ուկրաինացի մասնագետների մասնակցություն Հայաստանի Հանրապետության գլխավոր մայրուղիների վերականգնման և նորացման երկարաժամկետ ծրագրերի մշակման գործում	2001-2010	Տրանսպորտի նախարարություն	Տրանսպորտի և կապի նախարարություն
2.5	Ագրոարդյունաբերական համալիր			
2.5.1	Համագործակցություն գիտական հիմնարկությունների միջև սելեկցիայի, գենետիկայի և կենսատեխնոլոգիայի հարցերով	2001-2010	Ագրոարդյունաբերության նախարարություն	Գյուղատնտեսության նախարարություն
2.5.2	Խաղողագործության, այգեգործության և գինեգործության ճյուղերում	2001-2010	Ագրոարդյունաբերության նախարարություն	Գյուղատնտեսության նախարարություն

	գիտատեխնիկական տեղեկության և ժամանակակից առաջնակարգ տեխնոլոգիաների կիրառման փորձի փոխանակում			
2.6	Քիմիական, բժշկական և միկրոկենսաբանական արդյունաբերություն			
2.6.1	Մշակել միջոցառումների համալիր՝ ուղղված ուկրաինական դեղագործական մատակարարվող արտադրանքի և հայկական քիմիական արտադրանքի /այդ թվում՝ քլորոպրենային կաուչուկի և լատեքսի/ անվանացանկի ընդլայնման հաշվին Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի միջև արտաքին առևտրի շրջանառությունը ավելացնելուն	2001-2006	Բժշկակենսաբանական արդյունաբերության պետական կոմիտե	«Բիոտեխնոլոգիա ԳՀԻ» ՓԲԸ, «Նաիրիտ» ՓԲԸ, «Պոլիվինիլացետատ» ՓԲԸ
2.6.2	Ընդլայնել գիտատեխնիկական համագործակցությունը դեղագործական արդյունաբերությունում՝ ներգրավելով գիտության, տեխնիկայի և ժամանակակից տեխնոլոգիաների առաջատար նվաճումները և տրամադրելով տեխնիկական օգնություն	2001-2010	Բժշկակենսաբանական արդյունաբերության պետական կոմիտե	Արդյունաբերության և առևտրի նախարարություն, Առողջապահության նախարարություն
2.6.3	Քննարկել մատակարարված դեղագործական արտադրանքի համար Հայաստանի	2001	Բժշկակենսաբանական արդյունաբերության պետական կոմիտե	Արդյունաբերության և առևտրի նախարարություն, Առողջապահության

	Հանրապետության կենտրոնական բանկի և Ուկրաինայի ազգային բանկի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների կազմակերպման մեխանիզմը			Նախարարություն
2.7	Շինանյութերի արդյունաբերություն			
2.7.1	Շինարարական նշանակության արտադրանքի (սանիտարաշինարարական արտադրանք, պատուհանի ապակի, մետաղական արտադրանք պատուհանների և դռների համար, ապակե բլոկներ, բյուրեղապակյա և ապակյա տարաներ, ցեմենտ, տանիքածածկի նյութեր, երեսապատման քարեր, կաոլին, գրաֆիտ և այլն) արտահանման մեծացում	2001-2010	«Ուկրստրոյմատերիալ» կորպորացիա, «Ուկրցեմենտ» կոնցեռն, Էկոնոմիկայի նախարարություն	Արդյունաբերության և առևտրի նախարարություն
2.7.2	Բնական քարից ոչ հանքային շինանյութերի արտադրության կազմակերպման նպատակով երկրաբանահետախուզական աշխատանքների կատարում	2001	«Ուկրստրոյմատերիալ» կորպորացիա, Ուկրգեոլստրոյ	Արդյունաբերության և առևտրի նախարարություն
2.7.3	Ուկրաինայի Պետշինի կողմից արված մշակումները և հայրենական արտադրության իրերը (կենտրոնական	2001	Պետշին	Տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարար

	ջերմամատակարարման կաթսայատներ, տարբեր հզորության կաթսաների տիպաչար, կաթսաների համար տարբեր հզորության ջերմաուտիլիզատորներ, վակուումային ապաաէրա-ցիոն սարքավորումների տիպաչար /ՎԱՍ/) օգտագործելու առաջարկ			
2.7.4	Կոալինիտի՝ տեխնոգեն հումքի ազնվացման տեխնոլոգիաների ներդրման հետ կապված տեխնիկական օգնության ցուցաբերում	2001-2010		Արդյունաբերության և առևտրի նախարարություն, Քաջարանի ՄՄԿ
2.8	Ծիճակագրություն			
2.8.1	Մեթոդաբանական նյութերի, վիճակագրական հրատարակությունների և հրապարակումների փոխանակման իրականացում	2001-2010	Վիճպետկոմ	Վիճակագրության, պետռեզիստրի և վերլուծության վարչություն
2.8.2	Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի միջև արտաքին առևտրի հարցերով վիճակագրական տեղեկության փոխանակում	2001-2010	Վիճպետկոմ	Վիճակագրության, պետռեզիստրի և վերլուծության վարչություն
2.9	Գիտատեխնիկական համագործակցություն			
2.9.1	Մի շարք հետազոտական և բուժկանխարգելիչ միջոցառումների	2001-2010	Ուկրաինայի բժշկական գիտությունների ակադեմիա	Գիտությունների ակադեմիա, Առողջապահության

	մշակում՝ բժշկության մեջ լազերային տեխնոլոգիաների օգտագործումով, ինչպես նաև գիտական տեղեկության փոխանակում			նախարարություն
2.9.2	Բնակարանային քաղաքացիական շինարարության մեջ ջերմարդյունավետ սեյսմակայուն ճարտարապետաշինարարական նոր համակարգերի մշակման և ներդրման ուղղությամբ գիտատեխնիկական տեղեկության փոխանակում՝ երկրների սեյսմիկ տարածքներում դրանց հետագա ծավալման նպատակով	2001-2010	Պետշին, ԿիևՋՆԻԷՊ ՂրիմԳԻԻնախագիծ	Կառավարությանն առընթեր սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն
2.9.3	Քաղաքաշինության ոլորտում օրենսդրական ակտերի մշակման գործում փորձի և տեղեկության, նոր մոտեցումների, նորմատիվ բազայի բարեփոխման ուղղությունների, բնակավայրերի տարածքների պլանավորման և կառուցապատման պետական նոր նորմերի (շուկայական տնտեսության և զարգացած երկրների միջազգային նորմատիվների հաշվառումով) մշակման գործում փորձի և տեղեկության փոխանակում	2001-2010	Պետշին	Տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարար

2.9.4	Համագործակցություն բնակարանա-յին շինարարության զարգացման, բնակարանային ֆոնդի շահագործման և պահպանման պետական քաղաքականության ձևավորման հարցերով	2001-2006	Պետշին	Տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարար
2.9.5	Պատուհանի ապակու, այդ թվում՝ ֆոսֆոր մեթոդով և ապակյա այլ իրերի արտադրության տեխնոլոգիաների ստեղծման գործում տեխնիկական օգնության նախատեսում և տրամադրում	2001-2004	«Ուկրստրոյմատերիալ» կորպորացիա, ՈւկրԳԻՍ	Արդյունաբերության և առևտրի նախարարություն
2.9.6	Երկրաբանահետախուզական աշխատանքների կատարում՝ բնական քարից ոչ հանքային շինարարական և երեսպատման նյութերի արտադրության համար օգտակար հանածոների հետախուզման նպատակով	2001-2005	«Ուկրստրոյմատերիալ» կորպորացիա, Ուկրգեոլստրոյ	Արդյունաբերության և առևտրի նախարարություն
2.9.7	Սեյսմավտանգ տարածաշրջաններում սահող գետին ունեցող վայրերում շենքերի և շինությունների կառուցման և հուսալի շահագործման խնդիրների ուսումնասիրում և լուծում	2001-2005	ՆԳԻՍԿ	Կառավարությանն առընթեր սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն
2.9.8	Անթույլատրելի թեքվածքներ և ձևախախտումներ ստացած շենքերի և շինությունների	2001-2005	ՆԳԻՍԿ	Կառավարությանն առընթեր սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն

	շահագործման հուսալիության վերականգնում			
2.9.9	Շենքերի և շինությունների կառուցվածքային պաշտպանության արդյու-նավետ մեթոդների ուսումնասիրում և մշակում՝ հաշվի առնելով 1988թ. հայկական երկրաշարժի հետևանքները	2001-2003	ՆԳԻՍԿ	Կառավարությանն առընթեր սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն
2.9.10	Բնակավայրերում ջերմության պակասի հիմնախնդրի լուծման հարցում հայեցակարգային մոտեցումների մշակում	2001	Պետշին	Տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարար
2.9.11	Ջերմային էներգիայի արտադրման ժամանակ ցածրորակ պինդ վառելիքի այրման համար սարքավորումների մշակում և փորձարկում	2001	Պետշին	Էներգետիկայի նախարարություն
2.9.12	Ջերմային ցանցերի համար նախամեկուսացված փրփրաուրիտանային խողովակների տեխնոլոգիաների և արտադրության մշակում և ներդրում	2001	Պետշին	Արդյունաբերության և առևտրի նախարարություն
2.9.13	Համագործակցություն ճարտարապետական հուշարձանների վերականգնման և պահպանման բնագավառում	2001-2010	Պետշին, Ուկրոճեստավրացիա	Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն
2.9.14	Հեռանկարային կիսահաղորդչային	2001-2007	Արդյունաբերական	Արդյունաբերության և առևտրի

	<p>նյութերի /այդ թվում՝ կիսաբյուրեղային և միաբյուրեղային կայծքարի, արեգակնային էներգետիկայի համար արեգակնային կայծքարի, լեգիրացված կայծքարի և այլն/ արտադրության ոլորտում համատեղ ուսումնասիրությունների կատարում և գիտատեխնիկական մշակումների ներդրում: Հայաստանի Հանրապետությունում և Ուկրաինայում, ինչպես նաև երրորդ երկրներում սպառման հնարավոր շուկաների ուսումնասիրություն</p>		<p>քաղաքականության նախարարություն, Տիտանի ինստիտուտ, Ջապորոժիե տիտանամագնեզիումի կոմբինատ, ք. Ջապորոժիե, Դոնեցկի քիմիամետալուրգիական կոմբինատ, ԹԸՁ «Մաքուր մետաղներ», ք. Սվերդլովսկ, Ֆիզիկայի ինստիտուտ, ՈւԳԱԱ կիսահաղորդիչների ինստիտուտ, «Կրեմեն» ՊՁ, ք. Սվերդլովսկ</p>	<p>Նախարարություն, Ֆիզիկայի ինստիտուտ, ք. Երևան</p>
2.9.15	<p>Կայծքարի միաբյուրեղների աճեցման տեխնոլոգիայի մշակում Չոխրալսկու մեթոդով՝ հիմնական խառնուրդների (III և V խմբերի տարրեր, թթվածին, ածխածին) բաշխման բարելավված մակրոանմիատարրությամբ և միկրոանմիատարրությամբ</p>	2001-2010	<p>Տիտան ԳՀԻ, Արդյունաբերական քաղաքականության նախարարություն, Ուկրաինայի գիտությունների ազգային ակադեմիայի ֆիզիկայի ինստիտուտ, /ՈւԳԱԱ/</p>	<p>Ֆիզիկայի ինստիտուտ</p>
2.9.16	<p>Բարձր ճառագայթադիմացկունություն և ջերմակայունություն ունեցող նյութերի մշակում (գերմանիումով լեգիրացված կայծքարի հիման վրա) միկրոէլեկտրոնկայի, ուժային</p>	2001-2010	<p>Տիտան ԳՀԻ, Արդյունաբերական քաղաքականության նախարարություն, ՈւԳԱԱ ֆիզիկայի ինստիտուտ, ՈւԳԱԱ միջուկային հետազոտությունների ինստիտուտ</p>	<p>Ֆիզիկայի ինստիտուտ</p>

	Էլեկտրատեխնիկայի և արեգակնային էներգետիկայի պահանջների համար			
2.9.17	150 մմ-ից ավելի տրամագծով և մետաղական խառնուրդների քիչ պարունակությամբ կայծքարի աճեցման մեթոդի մշակում	2001-2003	Տիտան ԳՀԻ, Արդյունաբերական քաղաքականության նախարարություն, ՈւԳԱԱ ֆիզիկայի ինստիտուտ	Երևանի ֆիզիկայի ինստիտուտ
2.9.17 ս	Համատեղ առաջարկությունների պատրաստում Իրան-Հայաստան գազամուղի շինարարության նախագիծը իրագործելիս Ուկրաինական կազմակերպությունների հնարավոր մասնակցության վերաբերյալ	2001-2002	Էներգետիկայի և ջեռուցման նախարարություն, «Ուկրաինայի նավթագազ»	Էներգետիկայի նախարարություն
2.9.18	Ապրանքների ամենամյա ցուցահանդես-վաճառքների կազմակերպում (հաջորդաբար Հայաստանի Հանրապետությունում և Ուկրաինայում): Ցուցահանդեսների ժամանակ համատեղ սեմինարների և գիտաժողովների անցկացում	2001-2010	Արդյունաբերական քաղաքականության նախարարություն, ՊՁ-ԾՃԹԾՁ «Էրիդան», ք. Կիև	Առևտրաարդյունաբերական պալատ, «Արմէկսպո» ՊՓԲԸ
2.9.19	Հետազոտությունների համատեղ անցկացում նոր տեխնոլոգիաների մշակման և տեխնիկայի նոր օրինակների ստեղծման ոլորտում			Արդյունաբերության և առևտրի նախարարություն